

Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ԿՈՄԻՏԱՍԻՆ ՀԵՏ*

V.— Պոլսո համերգներուն շարանը

Բաց էր այլևս ճամբան Կոմիտասի և իր առաքելության առջև։ Բայց իր հիմնական մտահոգության դաշտը մտնելե առաջ, ան ստիպված էր զանգվածներուն սիրցնել նախ հայ երգը։ Ու այդ համերգներով միայն կրնար ըլլալ։

Այնպես որ Իզմիրեն մայրաքաղաք հազիվ ոտք կոխած, Կոմիտաս Պոլսո իր երկրորդ համերգը կուտար, 1911 փետրվար 20-ին (մարտ 5), այս անգամ «Յունիոն ֆրանսեզ»-ի մեջ։ Խումբը զտված կթվեր ըլլալ, ու անոր մասնակցողներուն թիվը երկու հարյուրը չէր անցներ հիմա։ Տպավորությունը սակայն այնքան ուժեղ էր որքան առաջին համերգին, ինչպես հայ ներկաներուն, նույնպես օտար հյուրերուն համար, որոնք ստվար էին այս անգամ ևս։

Մամուլը նույնքան ջերմ էր իր այս անգամվան արտահայտության մեջ ալ։ Զմոռնանք հիշել, թե Կոմիտասի սույն համերգին հոդվածներու շարք մը կնվիրեր «Ազատամարտ»-ի մեջ Ռ. Լեռնյան (Լիբարիտ Նազարյանց), մեկը երաժշտութենե իրապես հասկցող մեր հազվագյուտ հրապարակագիրներեն, որ Կովկասեն ալ համակիր ու ջատագով էր եղեր Կոմիտասի սկսած գործին, և որուն էր հանձներ Կոմիտաս վարդապետ Թիֆլիսի մեջ 1909-ին իր ինքնակենսագրությունը, լույս տեսած շատ ուշ նախ «Հայրենիք»-ի (1924 մայիս, էջ 83—87), և հետո «Անահիտ»-ի (1931, թիվ 1—2, էջ 2) և «Հուսաբեր»-ի (1935 նոյեմբեր 2) մեջ։ Հոդվածներեն մեկուն մեջ Լեռնյան կընդգծեր արժեքը Կոմիտասի կատարած գործին, շեշտելով մանավանդ, որ ան առաջինը կըլլար, Կարա-Մուրզայի դժգույն գործեն հետո, հայ ժողովրդական երաժշտությունը մեզ տալու իր հարազատ ոգիին և կառուցվածքին մեջ։ Արդարև, կրսեր Լեռնյան, Կարա-Մուրզան իր բավական խոշոր տեղն ունենալով հայկական երաժշտության պատմության մեջ, առաջինը հանդիսացած ըլլալու համար հայ ժողովրդական երգը մշակող և ժողովրդականացնող, «չկրցավ սակայն գլուխ հանել գործը համապատասխան գեղարվեստի իսկական պահանջներուն, որովհետև իրեն կպակսեր լուրջ երաժշտական պատրաստություն և հետո ան չէր կրցած թափանցել հայ-ժողովրդական երաժշտության ոգիին և կառուցվածքին մեջ։ Այդ է պատճառը, որ անոր մշակումը չափազանց մակերեսային բնույթ կկրեր, և մյուս կողմե՝ մնացյալ ձայները օրգանապես կապված չըլլալով հիմնական եղանակին հետ, բոլորովին խորթ կհնչեին»։ Մինչդեռ «Կոմիտաս վարդապետի ըրածը կատարյալ հեղաշրջում մրն էր հայ ժողովրդական երաժշտության մասին եղած տեսակետներու մեջ։ ... Կոմիտաս վարդա-

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1965 թվականի № № Ա-ից, Ե—Զ-էջ, Ը—Թ-ից, Ժ-ից և 1966 թվականի № № Ա-ից և Բ-ից։

պետը գտած է, վերջապես այն բանային, որուն շնորհիվ կհասկցվի հայկական և եվրոպական երաժշտության հյուսվածքին միջև եղող տարբերությունը։ Այդ է պատճառը, որ հայ գեղջկական երգերու՝ վարդապետին կողմեն կատարված մշակումը շատ նպաստավոր կերպով կտարբերի մինչև այժմ եղածներեն. ու մինչ այս վերջինները իրենց գործերու մեջ պահպանած են միայն արտաքին—տեսական վայելչությունը, Կոմիտաս վարդապետի ձեռքին տակ ներդաշնակումը հարազատորեն կբխի հիմնական եղանակին ներքին էութենեն, կկազմե անոր անհրաժեշտ շարունակությունը և անոր հետ միասին բնական ամբողջություն մը կներկայացնե»[61]։

Լեոնյան դժբախտ կնկատեր սակայն մեծ արվեստագետը, որ իր երաժշտական գործունեության ամբողջ ընթացքին չէ ունեցած կատարելապես մարզված խումբ մը իր տրամագրության տակ, որպեսզի կարենար լիովին ճանչցնել իր ստեղծագործությունը. իր Պոլսո խումբը, օրինակ՝ «բաղկացած է այնպիսի տարրերե, որոնք առաջին անգամ ըլլալով կմասնակցեին բազմաձայն երգեցիկ խումբի, և հետևաբար պետք է բոլորին նվիրական պարտականություն ըլլա կանոնավոր և բավարար ուժերե կազմված տեսական խումբ մը ստեղծել և դնել վարդապետին տրամագրության տակ»։

Տեղն է ավելցնելու, թե մենք բոլորս, որ Կոմիտասի համերգներուն կհետևեինք և անոր գործունեության արձագանք կըլլայինք մամուլին մեջ, «պրոֆան»-ներ էինք պարզ։ Լեոնյան առաջինը կըլլար, որ իր հոդվածներով Կոմիտասի գործին երաժշտական արժեքին վրա ևս կծանրանար մեր մեջ։ Ավելի նոր օրերու պետք է գալ, որպեսզի Կոմիտասի կատարած աշխատանքը ընդունվեր և գնահատվեր, և ան ալ՝ երբ Եվրոպան, հանձին իր երաժշտական հեղինակությանց, իր մեծարանքի տուրքը տվեր տալ հայ երգին ու իր վարպետին։

Մենք խանդավառվելե զատ ուրիշ բան չէինք կրնար ընել դեռ, ու մեր այդ խանդավառությունը ևս շատ տեսնողներ դեռ կային։

* * *

Չմոռնանք, որ Կոմիտասի համերգներուն հաղթական այս նոր արշավին պահուն իսկ մուլտուքներ դեռ կային Պոլսո մեջ տեղ-տեղ, թեև արդեն շատ խոպոտ։ Քրթմնջյուն մը միշտ կլսվեր տեղե մը։ Արձանագրենք հոս անոնցմե մեկը, գոնե իբրև զվարճալիք։ Արձանագրենք, առանց փույթ ընելու, թե ստվեր մը բերած պիտի ըլլանք ադով հայ մտքի վաստակավորի մը հիշատակին, որ լույսի նոր գարուն մեջ ալ դեռ ատեն մը կառչած մնաց հին տախտակներուն, և Պոլսո մեջ հանրային կարծիք վարած օրերուն, դեռ խեթով կնայեր ամեն նոր բանի։ Երվանդ Տեր Անդրեասյանն էր մտքի այդ վաստակավորը, Եղիշե Դուրյանի նախկին աշակերտ, պահ մը ուսուցիչ Արմաշի դպրեվանքին մեջ, հետո Պոլիս հաստատված՝ պարապելու համար մեկ կողմե հայերեն դասերով Պերպերյանի մեջ, և մյուս կողմե լուսաղբար դարձած, «Մանդումն»-ի մեջ, համբավավոր Քասիմին։ Երկուքն ալ նոր բան չէին հանդուրժեր, թեև մեկը, Քասիմը, հանդգներ էր աշխարհաբարի վերածել Նարեկը, և մյուսը, ինքը, աշխարհաբար հրատարակեր էր մաս մը հայ շարականներեն։

Արդ, Տեր Անդրեասյանին, կարևի, Կոմիտասը խծբծեր էր Սկյուդարի մեջ։ Լուրը հաղորդեր էին մեր թերթին, ուր հետևյալ քանի մը կծու տողերը լույս տեսան, որքան կհիշեմ Գեղամ Բարսեղյանի կողմե գրի առնված.

«Սկյուդարեն երկու օրիորդներ, Ա. և Ա., որոնք «Երվանդ Տեր Անդրեասյանը իբրև դաստատու ունենալու դժբախտությունը կկրեն», ընդարձակ դրությամբ մը իրենց ցասումը կհայտնեն հռչակավոր անդրլեռնականին վերջին ծանծաղամտություններուն դեմ։ Այդ անբուժելի տիրացուն, հավատարիմ իր կոչումին, առիթ առնելով «Բաֆֆի» լսարանական միության վերջին երաժշտական երեկույթը, ուզած էր «գայթակղելի» ցուցնել Կոմիտաս վարդապետի երևումը՝ աշխարհիկ բեմերու վրա։ Թող ներեն երկու օրիորդները, եթե ավելորդ կնկատենք զբաղիլ տիպարով մը, որ ուխտած է իր գրիչը «գործածել հայ ժողովուրդը պառակտելու համար», ինչպես այնքան լավ զգացեր են իրենք իսկ»[62]։

Ավելցնենք, որ կյանքը հետագային պիտի այլափոխեր նաև ողբացյալ մեր բարեկամը...

Ստուգիվ, Ետան, որ նույնինքն Երվանդ Տեր Անդրեասյանն էր, տարիներ հետո, մեծ վարպետին մահվան առթիվ, պիտի ստորագրեր հուզումով և խանդաղատանքով զեղուն գրություն մը «Հառաջ»-ի մեջ, վերհիշելու համար Կոմիտասի հետագա մեկ այցը Սկյուդար, և անոր երգերը «Բաֆֆի» հառաջդիմական միության լսարանին մեջ։ Այդ երգերեն մեկը «Զայն տուր, ո՜վ ծովակ»-ն էր եղեր։ Ետան կգրեր այդ օրվան իր հուզումը վերհիշելով.

«Քու ծովակդ դարերու հառաջանքներեն, կողկողանքներեն հեղուկ սպին էր երկրա-

[61] «Ազատամարտ», 1911 փետրվար 27/12 մարտ, թիվ 525։

[62] «Ազատամարտ», 1911 մարտ 9/22, թիվ 535։

գունդին մարմինին վրա, տանջանքներե, ջարդերե ձևացած ջրակույտ մը, որ, սակայն, քու մատներուդ տակ կփոթորկե՞ր, դարավոր տառապանքներու շփումեն կայծ-մատներուդ տակ»[63]։

Երբեմնի «անդրլեռնական»-ին այս հուզիչ անդրադարձումը մեզ չի՞ հիշեցներ այն մյուս ժեստը, զոր ըրեր էր ատենին կովկասցի մտավորական մը, Գրիգոր Վանցյան, որ Կոմիտասի տաղանդին իր զմայլանքի տուրքը կուգար անոր տալու տարիներ առաջ, վարդապետին Բեռլինեն դարձին, ըսած ըլլալե հետո, թե «երեք ու կես տարում կոշկակարություն սովորել չի կարելի, չէ թե երաժշտություն»[64]։

* * *

Պոլսո իր երկրորդ ելույթեն ամիս մը չանցած, այն է մարտ 20-ին (12 ապրիլ), Կոմիտաս իր երրորդ համերգը կուտար, միշտ «Յունիոն-ֆրանսեզ»-ի սրահին մեջ, որ, այն տարիներուն, ըսենք ի դեպ, միակ սրահն էր, ուր տեղի կունենային նաև հայ հանդիսությունները, երաժշտական ելույթներ ըլլան թե դասախոսություններ։

Ապրիլ 2-ի սույն համերգը առիթ կուտար Ռուբեն Զարդարյանի «Ազատամարտ»-ի մեջ ստորագրելու «Առտվան տոմս» մը, «Արվեստ և հայրենիք» խորագրին ներքև, ընդգծելու համար զմայլանքի ու սարսուռի այն քանի մը ժամերը, զորս ապրեցանք այն օրը։ Այդ հոդվածին մեջ Զարդարյան կըսեր.

Հայկական գեղարվեստն էր, ժողովրդական երաժշտությունը, որ կրանար մեր առջև, շնորհիվ Կոմիտաս վարդապետի, նոր աշխարհ մը,— աշխարհը հայրենի դաշտերուն ու ծմակներուն, և կյանքը, որ կկենդանացնե ղանոնք։

Ի՜նչ ոգեկոչություն բնանկարներու և ի՜նչ ծավալում հովվական երգանքի, այդ խազերուն, այդ ձայնոլորումներուն, այդ շեշտերուն մեջեն։ Եվ մարդ, անբացատրելի երանության մը զգացումին տակ, կհարցնե յուրովի, թե իրա՞վ հայ գեղջկական հոգին եղած է այսքան քնարական, այսքան հարուստ և այսքան զգայուն։

Տարօրինա՞կ հակադրություն. արվեստի այս ստեղծագործությունը չի գար մեզի հայ ժողովուրդի ազնվական կատարներեն, չի գար մտքի ու դիրքի ոսկեզօծ բարձունքներեն. այլ կուգա վարեն, մթին ու խոնարհագույն ստորոտեն՝ գյուղեն ու գյուղացիեն։ Արորն ու ակոսն է, որ ստեղծեր են այդ մեղեդիները, հովն ու սարն է, որ դաշնակեր են զանոնք և գյուղացի աղջկան ու մաճկալի հոգին անդրադարձուցեր է այդ բոլորը՝ հափշտակությամբ ու խանդաղատագին միամտությամբ։

«Կոմիտաս վարդապետ համբերությամբ ու ճարտարությամբ մը՝ որ վայել է իրապես արժանի արվեստագետին, հավաքեր է այդ երգերը դյութական ոսկի սափորի մը մեջ, դաշնավորելով զանոնք չափի ու արվեստի օրենքներուն համաձայն։

Արվեստ և հայրենիք բառերը կհովանավորեին ֆրանսական այն սրահը, ուր Կոմիտաս վարդապետի խումբը կնվագեր կիրակի օր։ Արվեստը՝ հայրենիքեն առաջ. ըստ բախտի չէ որ այդ բառերը իրարու քով եկած են, ոչ ալ ըստ բախտի՝ որ մեկը նախապատվությամբ առաջ է անցեր մյուսեն։

Ազգային արվեստը այն միակ փառքն է՝ որուն առջև կրնա ամեն քաղաքացի լայնցնել իր կուրծքը և հպարտությամբ բարձր բռնել իր գլուխը։

Եվ հայ երաժշտությունը, ահա իր հայտնությամբ, կուգա պարգևել մեզի այդ հպարտությունը, որուն բովանդակ երախտիքը կպարտինք Կոմիտաս վարդապետի»[65]։

Բազմությունը ստվար չէր, ավա՜ղ, այս անգամ, ինչպես կմատնանշեր Զարդարյան իր հոդվածին մեջ։ Պոլիսը վարժված չէր,— ինչպես պիտի չվարժվեր երբեք հետագային, գեղարվեստական երեք վայելք ըմբոշխնել երեք ամսվան մեջ...

Կոմիտասի հաջորդ ելույթը իր մասնակցությունն էր Ազգային հիվանդանոցի ի նպաստ տրված ավանդական նվագահանդեսին, կազմակերպված 1911 մարտ 27-ին (ապրիլ 9), Բրտի-շանի ձմեռային թատրոնին մեջ, որ բացառիկ երաժշտատոն մը կդառնար այս անգամ։ Նվագի համառոտ բաժինե մը հետո, Կոմիտասն էր՝ որ հանդես եկավ իր 300 հոգինոց երգչախմբով, հանդիսության փայլը կրկնապատկելով իր մեներգերով և պակուցումի մեջ ձգելով բովանդակ սրահը, ուր մեծ թվով ներկա էին օտարներ, եվրոպացի և թուրք, ի միջի այլոց կայսերազուն իշխան Մեջիդ էֆենդին, որուն հովանավորության տակ էր, որ կտրվեր նվագահանդեսը։

Մեջիդ էֆենդի այդ օրն էր, որ պիտի հմայվեր Կոմիտասեն։ Գեղարվեստի սիրահար կսեպվեր իշխանը, և ինքն իսկ կհետևեր արվեստի։ Բոլոր թուրք իշխանազունները,

[63] «Հառաջ», 1935 նոյեմբեր 3։

[64] Վահան Տեր-Առաքելյան, «Անհիշաչար մարդը», «Ժամանակակիցներ Կոմիտասի մասին», էջ 182։

[65] «Ազատամարտ», 1911, 22 մարտ/4 ապրիլ, թիվ 544։

հին սուլթաններու օրերեն սկսյալ, արվեստի մը կհետևեին։ Մեջիդ նախընտրեր էր նկարչությունը։ Ան հետամուտ էր նաև երաժշտության։

Կոմիտաս իրեն համար հայտնություն մը կըլլար այդ օրը, ու առիթ կստեղծվեր իրենց միջև կապի մը։

Մենք այդ կապին դեռ պիտի անդրադառնանք։

Պետք է մասնավորապես հիշել նաև այն հիացումը, զոր առթեց Կոմիտաս Պոլիս գտնվող օտար երաժշտագետներուն, ինչպես Լանդե։ Սելվելլի, Ֆուրլանի, Հեգե, Գոռպի և այլն, որոնք իր համերգներուն կուգային հաճախ, միշտ ալ բաժնվելով զմայլանքով, և որոնցմե շատերը սերտ կապ պահպանեցին հետը մինչև ետք։

Հայ երաժշտագետներեն Կոմիտասի գործին ջերմ համակիր էին Սինանյան եղբայրներն ալ, բայց մանավանդ Էդգար Մանաս, որ Հարություն Սինանյանին պես մեծ դեր ունեցեր էր ատենին Ղալաթիո երգչախումբին պատրաստության մեջ, և որ, անոր նման, հպարտ էր հիմա, որ իրենց մարզած խումբը կորիզը կըլլար Կոմիտասի գործունեության։ Մանաս, ինչպես Սինանյան, Պոլսո հայ մշակութային կյանքին միշտ ձուլված մնացին հետագային ալ, և իրենց կարգին սաներ հասցուցին, որոնցմե ոմանք դեռ մինչև այսօր զարկ կուտան հայ երաժշտական կյանքին Պոլսո մեջ։

Մանաս Կոմիտասի Պոլիս եկած օրերուն Բերայի հայ երիտասարդ միության «Քնար» երգչախումբը կվարեր, և 1910-ի ընթացքին համերգներ տվեր էր անով քանիցս Բերայի և Սկյուդարի մեջ։ 1911-ի սկիզբը, երբ Կոմիտաս Պոլիս էր արդեն և իր առաջին համերգը տված, Մանաս իր «Քնար» սիմֆոնիկ նվագախումբով նվագահանդես մը կուտար, իսկ նույն տարվան ապրիլ 9-ին Ազգային հիվանդանոցի ի նպաստ երաժշտահանդեսը տեղի կունենար երկու վարպետներուն մասնակցությամբ, որոնք ծրագրած էին միատեղ երաժշտահանդեսներ տալ հետագային ալ, բայց պարտագաները թույլատու չեղան[66]։

Էդգար Մանասի պիտի վիճակեր տարիներ հետո, այն է 1931-ին, վարել երգչախումբը, որ Կոմիտասի նախկին սաներուն և համակիրներուն նախաձեռնությամբ կազմըվեր էր Պոլսո մեջ, տոնելու համար «Կոմիտասի օր»-ը, վարպետին ծննդյան 60-ամյակին առթիվ, երբ ան կտառապեր Փարիզ, հոգեբուժարանի մը անկյունը։

Կոմիտաս, միշտ այդ օրերուն, կախարդեր էր նաև երաժշտական հակումներով օժտված խումբ մը այն տղաքը, որոնք իր սաները պիտի դառնային շուտով և հետագային կառչած պիտի մնային իր առաքելության։ Այդ խումբին մեջ, Վարդան Սարգսյանի և Վաղարշակ Սրվանձտյանցի կողքին, Բարսեղ Կանաչյանն ալ կար, որ ներկայիս արդեն ծերունի և զրկված աչքերու լույսեն, քաշված է Բաղդադ, և որ առաջին օրերու իր հուղումներուն մասին հետևյալը ըսած է Երևանի երաժշտական քննադատներեն մեկուն, Անահիտ Ցիցիկյանին, որ վերջերս այցելած էր իրեն.

«Իմ երաժշտական մտածողության մեջ, արմատական բեկում տեղի ունեցավ 1911 թվականին, Պոլսում։ Այդ ժամանակ ես ջութակի և դաշնամուրի դասեր էի տալիս և միաժամանակ ղեկավարում էի «Մասիս» երգչախումբը։ Այսօրվա նման հիշում եմ Կոմիտասի սպասվող համերգի շուրջ ստեղծված աղմուկը։ Ինձ ալ հրավիրեցին այդ համերգին, բայց ես այն ժամանակ դեռ չգիտեի Կոմիտասին և, ինչ մեղքս պահեմ, չէի սպասում, որ առանձնապես հետաքրքրքական մի բան կարող է մատուցել վարդապետը։ Ուստի կարո՞ղ եք պատկերացնել, թե ինչ ցնցող անակնկալ եղավ ինձ համար, երբ ամբողջ համերգի ընթացքում մեկը մյուսի ետևից հնչում էին Կոմիտասի գոհար երգերը՝ երկու հարյուր հոգուց բաղկացած երգչախմբի կատարմամբ։ Որքա՜ն հմայք ու գեղեցկություն կար ամեն մի երգի, ամեն մի տողի, նախադասության ու նոտայի մեջ։ Կատարման ինչպիսի՜ վարպետություն, ի՜նչ զգացումներ, ի՜նչ հոգի։ Համերգն արտակարգ հաջողություն ունեցավ. դա ուղղակի փառատոն էր։ Ես շատ հուզված էի և համերգից հետո վազեցի Կոմիտասի մոտ, բացականչելով. «Մի՞թե դուք եք դրել այս ամբողջը։ Դուք հանճա՜ր եք»։— «Ախ դու մոդե՜ս,— սիրալիր կատակեց Կոմիտասը իմ արտահայտության անմիջականությունից զգացված,— կասկածո՞ւմ ես։ Հիշի՛ր, այսպիսին է բնիկ հայ երգը։ Սիրի՛ր հայ երգը, սիրի՛ր»։

Ու արդարև Կանաչյան սիրեց հայ երգը։ Մեկն եղավ շուտով Կոմիտասի այն խումբ մը սաներեն, որոնք մարդվեցան անոր մոգական շունչին տակ, ու վարպետին եղերական վախճանեն հետո, հավատարիմ մնացին անոր կտակին, ստեղծելով իրենք ևս իրենց կարգին, ու հայ երգը սիրցնելով հայ Սփյուռքի մեջ...

Մենք դեռ պիտի անդրադառնանք անոնց, պատմելու ատեն, թե ինչպես ման եկավ Կո-

---

66 Վա-Քյո, «Մարմարա», 1964 մարտ 18։

միտաս հայ գաղութներու մեջ հայ երգին հետ մեկտեղ...

VI.— Բուրգերու աշխարհին մեջ

Կոմիտասի Պոլսո և Իզմիրի մեջ ստեղծած խանդավառությունը արձագանք գտեր էր ամեն կողմ։ Ցկար հայ շրջան մը, որ զայն վայելել չուզեր։ Առաջին հրավերները Եգիպտոսեն տեղալ սկսան։

Կոմիտաս իր առաքելության մաս կսեպեր հայ երգին հմայքը պտտցնել ուր որ կրնար, և օգտվելով գագարեն, որ անհրաժեշտ էր Պոլսո իր չորս համերգներեն հետո, վճռեց արտասահման անցնիլ։

Հիվանդանոցի ի նպաստ իր համերգը տեղի ունեցեր էր մարտ 27-ին (10 ապրիլ) և հաջորդ օրը ընդունվեր էր Մեջիդ էֆենդիեն։ Օր մը հետո ան արդեն կմեկներ Պոլսեն։

Արդարև, թերթերը կգրեին իրենց 1911 մարտ 29 (ապրիլ 11) թիվով, թե Կոմիտաս նույն օրն իսկ կմեկնի Իզմիր, ուր պահ մը կանգ առնելե հետո, Զատիկը պիտի անցնե Եգիպտոս և համերգներ պիտի տա Աղեքսանդրիո և Կահիրեի մեջ։ Հետո պիտի երթա Երուսաղեմ, փնտռելու և ուսումնասիրելու համար կարգ մը ձեռագիրներ, և անկե պիտի ուղևորվի Եվրոպա։ Աշնան կվերադառնա Պոլիս, լրջորեն զբաղելու համար երաժշտանոցի հաստատման ծրագրով[37]։

Կոմիտաս 1911 մայիսին փարավոններու երկիրն էր արդեն։ Իր վաղուց փայփայած մեկ երազն էր, որ կիրականանար։ Կուգար աշխարհ մը, ուր տեսնելու և հիանալու այնքան բան կար, և ուր հայ գաղութ մը կշնչեր խաղաղ ու բարօր։

«Կռունկ»-ն եղավ իր առաջին ողջույնը գաղութի մը, որ երգի կսպասեր սրտատրոփ։ Դաշտահանդեսը, զոր Հայկական բարեգործական ընդհանուր միությունը կազմակերպեց Կահիրեի մեջ մայիսի սկիզբները, այսինքն Կոմիտասի այնտեղ հասած օրերուն, ցնծատոնի մը վերածվեցավ։ երբ Կոմիտաս հանկարծ հայտնվեցավ հոն։ «Կռունկ»-ը, զոր այնտեղ երգեց, հուզման ալիք մը ծավալեց մարդոց սրտին մեջ, որ զվարճանալու եկեր էին, ու զայն տարածեց նաև դուրսը, խավե խավ ու քաղաքե քաղաք, ամբողջ գաղութ մը բռնկցնելով։

1911 տարվան մայիս, հունիս և հուլիս ամիսները տոնական օրեր եղան Եգիպտոսի հայ գաղութին համար։ Առաջին իսկ պահեն Կոմիտասը գուրգուրանքով շրջապատեցին հոն բոլորը, հանրության բոլոր խավերը անխտիր ու ամբողջ երեք ամիս շնչեցին անոր կախարդանքին տակ։

Այնտեղ ևս, ըլլա Աղեքսանդրիո, ըլլա Կահիրեի մեջ, հանրության հետ իր շփումները դասախոսություններով սկսան։ Այդ անդրանիկ հանդիպումները իրեն բավ էին եղեր ամենուրեք, որպեսզի առինքներ ամենքը ու իր դյութանքին տակ պահեր այլևս իր ունկնդիրը։ Այդպես եղեր էր Պոլիս և այլուր, այդպես եղավ նաև Եգիպտոսի մեջ։ Նմուշները, որոնցմով ան կհամեմեր իր զրույցները։ առաջին առիթն էին, որ մարդոց հոգին փոխադրվի ուրիշ աշխարհ մը, կամ անոնց ներսը նոր աշխարհ մը բացվի,— հայրենի աշխարհը իր սարերով ու իր դաշտերով, բայց և իր տքնությամբ ու իր կսկիծներով։

Դյուրին պիտի չըլլար սակայն այդ աշխարհը լրիվ ճանչցնել իր բովանդակ գեղեցկության մեջ։ Համերգներ անհրաժեշտ էին ամբողջական ընելու համար մարդոց հափշտակությունը։ Տիտանական աշխատանք պետք եղավ, որպեսզի միակ ամսվան մը մեջ երգչախումբ ստեղծե ու մարզե, այնպիսի տարրերե, որոնցմե շատեր հազիվ երգել գիտեին։ Ու ստուգիվ ամսվան մը մեջ արդեն պատրաստ էր խումբը իր առաջին ելույթն ունենալու։

Կոմիտաս երկու համերգներ տվավ Եգիպտոսի մեջ։ նախ Աղեքսանդրիա, հունիս 3/16-ին, «Ալհամբրա» սրահը, 190-ի չափ երկսեռ երգիչներով։ Գրեթե նույն համերգն էր, որ կրկնվեցավ միևնույն երգիչներով, երեք շաբաթ հետո, Կահիրեի «Արբաս» թատրոնին մեջ։ Երկու համերգներն ալ աննախընթաց ընդունելություն գտան հավասարապես։ Բավական է հիշել, որ անոնք լեփլեցուն եղան միջազգային բազմությամբ, և ներկայությունը վայելեցին պետական բարձր պաշտոնատարներու և դիվանագիտական մարմնեն բազմաթիվ դեմքերու։ Աղեքսանդրիո համերգին, օրինակ, ներկա էր վարչապետ Մուհամեդ Սաիդ փաշան, շրջապատված բոլոր նախարարներով։ Ավելցնենք, որ Եգիպտոսի հայ հոգևորականությունը ավելի մեծասիրտ եղավ քան Պոլսո կղերը։ Կահիրեի համերգին ներկա էր առաջնորդ Մկրտիչ եպիսկոպոս Աղավնունին քահանայական ամբողջ դասուն հետ, ինչպես ներկա էին պապական նվիրակը և հայ կաթոլիկ ու զպտի հոգևոր պետերը ևս։

Իր անխառն հիացումին մեջ միաձայն եղավ նաև մամուլը։ Բացի «Լուսաբեր-Արև»-են, որ իր էջերը շաբաթներով լայն բացավ դրվատալից հոդվածներու և ցնծագին նկարագրությանց, խանդավառ գրու-

[37] «Ազատամարտ», 1911 մարտ 29/11 ապրիլ, թիվ 550։

թյուններ հրատարակեցին նաև Կահիրեի և Աղեքսանդրիոյ բոլոր օտար թերթերը։ «Էջ-Մուքաղդամ» Կոմիտաս վարդապետը միջազգային երաժշտության ամենեն համբավավոր վարպետն հռչակեց, քննադատելով արարները, որոնք այնքան ետ մնացած էին գեղարվեստի մեջ։ «Էջ-Վաթան» պատմական ուսումնասիրություն մը հրատարակեց հայ երաժշտության և հայ ժողովուրդի հոգեկան արժեքներուն մասին և հանձին Կոմիտասի ողջունեց մեծ առաքյալ մը, որով հպարտ կրնար ըլլալ ոչ միայն հայ ժողովուրդը, այլև Արևելքն ամբողջ։ Հունարեն «Տելեգրաֆոս»-ը մաղթեց, որ նախախնամությունը հույն ազգեն ալ Կոմիտաս մը հարուցանե, որպեսզի կորուստե փրկե հելլեն հին երաժշտությունը։ «Լա Բուրս էժիպսիեն» խմբագրական մը նվիրեց հայ երաժշտության, ըսելով ի միջի այլոց. «Անցյալ երեկո Ալհամբրայի բեմին վրա հայ ժողովուրդի հոգին էր, որ ամբողջովին թրթռաց, հոգի մը համակ եռանդ, զոր ոչ մեկ ուժ պիտի կարենար բանտել կամ մարել։ Գիշերվան սարսուռին մեջ, ներդաշնակ խոսքեր, ցեղին զգացումներովն արյունած ու շառագույն, կիջնեին խաղ առ խաղ, ցեղի մը՝ որ իր հպարտությունը կպահեր և իր փոքրիկ համայնքեն իսկ ճոխություններ կպարգևեր մարդկությանն։

Կոմիտաս փուշեր չքաղեց Եգիպտոսի մեջ, ինչպես քաղեր էր Պոլիս։ Հոն տիրացուներ չելան իր դեմ։ Խոպոտ ձայներ չլսվեցան հոն հայ թերթերու սյունակներեն։ Հայ մտավորականներու խումբը, զոր այն օրերուն կհաշվեր բուրգերու աշխարհը, իր կողքին եղավ։ Վահան Մալեղյան, Միքայել Կյուրճյան, Լևոն Մկրտիչյան, Միհրան Տամատյան և ուրիշներ իրենց հիացումը շռայլեցին հողվածներու և բաժակաճառերու մեջ։

Կոմիտասի նման կախարդ մը պետք էր, որպեսզի իր մոգական հմայքին տակ դյութեր բոլորը և հայ գեղջուկին «կոշտ ու կոպիտ» երգերուն առջև բանար մարդոց զմայլած հոգին։ Արուս Աղատյան, որ Կոմիտասի եգիպտական այդ համերգներուն մասնակցած էր ինքն ալ, տասնյակ տարիներ հետո այդ օրերը պատմելով կգրեր, թե ինչպես Կոմիտաս կրցավ նաղելաշուք հայ օրիորդներուն սիրցնել այդ «անճոռնի» երգերը.

«Մեր խումբին մեջ մի քանի օրիորդներ իրենց կեղծ ու հավակնոտ նրբությամբ կառարկեին, թե «Դոլմա կեփեմ բիբարով» բառերը կոշտ կհնչեին և թե իրենք նույնիսկ բիբարով դոլմա չէին կերած...։ Իզմիրի, Պոլսո և Աղեքսանդրիոյ հայ երիտասարդության մեծ մասը վարժված էր եվրոպական հասարակ երգերու և զանոնք ընդունած էր արևմտյան նրբություններ...։

Եվ սակայն մեծ Վարպետը մեզի տարած է արդեն գավառի խորերը, ուր մեր երևակայության աչքով կտեսնենք հայ կինը, որ կերգե միանգամայն պատրաստելով իր երեկոյան կերակուրը.

«Քաղհան կանեմ հո՞ բարով,
Դոլմա կեփեմ բիբարով...»։

«Ա՜հ, դուք զգացում չունի՞ք. չե՞ք կրնար երևակայել... Քիչ մը հոգի դրեք ձեր երգին մեջ»,— կձայնե Կոմիտաս վարդապետ, մինչ կքաշքշենք գեղջկական սիրերգը.

«Կուժն առա ելա սարը,
Ջը գրտա ֆիղան յարը...»։

Կոմիտաս վարդապետ իրոք կապրեր ցավի, սիրո, ծիծաղի և նամանավանդ զրկանքի կյանքը իր զգայուն սրտով և վառ երևակայությամբ։ Նա կուզեր, որ մենք փոխնիփոխ ըլլայինք գեղջուկ կին, երիտասարդ հարս, սիրահար, կծծի աներ, պանդուխտ աղքատ ու հարուստ։ Քանիցս կկրկներ ցավագին նայվածքով. «Դուք զարիր չե՞ք եղած. չե՞ք գիտեր, թե կարոտը ի՞նչ է. զգացում դրեք ձեր ձայներուն մեջ։ Ու մեր երևակայությունը արևմտյան իրապաշտությամբ բթացած՝ կրկնակի քաջալերության կկարոտեր բնագավառի մաքուր գեղջուկ կյանքը ապրելու մեր երգերուն մեջ»[68]։

Կախարդե զատ ի՞նչ անուն տալ հրաշագործ այս մարդուն, որ հոգիները կերպարանափոխելու գաղտնիքը գիտեր...

Տիգրան Կամսարական, որ գրիչը լքելեն հետո հանդիսավոր առիթներու էր միայն, որ մահկանացուներուն կերևար, Կոմիտասի համերգներուն առթիվ պահ մը վար իջավ իր փղոսկրե աշտարակեն և «Լուսաբեր-Արև»-ի մեջ ստորագրեց իր ամենեն գեղեցիկ էջերեն մեկը, ուր կըսեր.

«Հոգիս դուն ուրեք վայելած է սրվեստի այն ազնվական ու գերագույն դրգանքը, հայու այն խոր ու աղվոր հուզումը, զոր ընծայեցիք դուք մեզի. «Զայնդ անսպառ», վարդապետ։

Ի՜նչ հրաշարվեստ հուշարար մըն եք դուք նախնի ու արդի հայ գեղեցկությանց. լիահավատ սիրով, բոլորանվեր ջանքով հետազոտեր, որոներ, ի քնար վերակոչեր եք

[68] Արուս Ազատյան. «Անցյալի էջերեն։ Կոմիտաս վարդապետ». տե՛ս «Հայաստանի կոչնակ», 1925, թիվ 35։

մեր քաղցրաղու, աստվածաշո՛ւնչ մեղեդիներն ու օրհներգությունները, որոնց միջեն մեր սուրբ հոգիները համբուրել տվիք մեզի։ Ասի սակայն չէ բավեր ձեր արվեստագիտական ու հայրենասիրական վառ հետաքրքրության, հրճվեթրթիռ, գուրգուրալիր, զմայլանքով բաբախուն հայրենիքին թաքթաքուր անշուք անկյուններեն, չկասկածված փոշեթաթախ խորշերեն վերագտեր, հարուցեր, կենսավետեր եք դուք ահա հայ գեղջուկ բանաստեղծությունը նաև, որուն սրտմոգիկ թլվատումը, կույս գեղեցկությունը պաշտել տվիք մեզի, վարդապետ։ Մենե ո՞վ պիտի կրնա մոռնալ երբեք հայրենիքի հոգեզվարճ այն տեսարանները, զոր խոսքով ու երգով հեռապարզեցիք մեր զմայլած աչքերուն առջև, վասնզի ձեր երգը, վարդապետ, նկարչություն մըն է կատարյալ. գույն ու պեսպիսություն ունի, խորություն ու մթնոլորտ ունի,— երկրին մթնոլորտը,— լույս ու ստվերներ ունի։

Երբ դուք եկաք վերհուշել մեզի ու վերհայտնել սխրալի ու հարազատ սա հայ գեղեցկությունները՝ զորմե անլուր էինք մենք ի բնե, շփոթում մը ունեցանք. մի՞ գուցե— ցայն վայր անհաղորդ հայրենի այդքան անուշիկ թրթռումներուն—մենք տարաշխարհիկ հայերս թերի, անկատար հայեր եղած ըլլայինք. բայց ինչո՞ւ համար այն ատեն մեր սրտերը իրենց խոր խավերուն մեջ այդ սաստկությամբ դղրդեցին ձեր «Կռունկ»-ին, «Մոկաց իշխան»-ին ու «Սիփանա քաջեր»-ուն...

... Բայց դուք վհուկ մըն եք, Հայր Սուրբ»[69]։

Վհուկը երեք ամբողջ ամիս զգլխեց բովանդակ գաղութ մը, որ պահ մը մոռցած ներքին վեճերը, որոնք անպակաս էին ու եղան հյուրընկալ այդ ափերուն վրա մինչև մեր օրերուն, եղբայրացեր էր կարծես, հայրենի հողեն եկող քաղցրությանց կախարդանքին տակ։

Գաղութը դասախոսություններեն և համերգներեն հետո ալ հանգիստ չթողուց խեղճ վարդապետը։ Զայն պտտցուց խնջույքե խնջույք, ու ճառերու հեղեղին տակ փորձեց մոռցնել անոր խոնջենքը։ Խնջույքները կվերածվեին հաճախ սրամտությանց, կատակներու, բառախաղերու մրցագաշտի մը, ուր Կոմիտաս պարտվողը չէր։

Ահա, առ ի հետաքրքրություն, նաև ճաշացուցակը, զոր ի պատիվ Կոմիտասին տվավ Կահիրեի հայ գաղութը 1911 հուլիս 4-ին, Կազինո Շաթրիի մեջ.

«Ակրատ Կուտինայի
Զուկ Ուրմիո
Եղինձ լորամարգի
Գառն Իշխանաձոր
Աղցան Տարոնո
Սառնախումբ Արարատա
Մրգեղենք Սիփանա
Գինի Գողթնի
Սուրճ Մոգա-կանա։

... Որքան ալ Գողթան պիտակը կրեր իրեն մատուցված գինին, ու որքան մոգական ըլլար սուրճը, Կոմիտասը հոգնեցուցեր էին սույն երեք ամիսները, այն վեցամսյա խոնջենքեն հետո, զոր կրեր էր ան Պոլսո և Իզմիրի մեջ։

Ան իսկապես կարիք ուներ կազդուրվելու և թարմանալու։

(Շարունակելի)

[69] Տիգրան Կամսարական, «Հայկական գեղեցկություններ։ Հայր Կոմիտասին», տե՛ս «Լուսաբեր-Արև», 1911, թիվ 990։